Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թվականի
նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը	Սամվել Հարությունյան
Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ
Գործուղման վայրը և ժամկետները	Մոսկվա՝ 2018թ. մայիսի 13-ից 16-ը
Հրավիրող կողմը	Գլոբալ հետազոտական խորհուրդ (ГИС), Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ
Գործուղման նպատակը	Մասնակցություն Գլոբալ հետազոտական խորհրդի (ГИС) կազմում ընդգրկված ազգային գիտական կազմակերպությունների ամենամյա հանդիպմանը
Քննարկված թեմաները	«Հարևաններ հետազոտությունների ոլորտում» խորագրով Կլոր սեղան, հետխորհրդային անկախ պետությունների գիտական կազմակերպությունների միջև համագործակցություն, համատեղ գիտական փորձաքննություն իրականցնելու հնարավորություններ, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի հետ համագործակցության ընդլայնման ուղղություններ
Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	2018թ. մայիսի 14-ին Գլոբալ հետազոտական խորհրդի (ГИС) կազմում ընդգրկված ազգային գիտական կազմակերպությունների ամենամյա հանդիպման շրջանակներում կայացած «Հարևաններ հետազոտությունների ոլորտում» Կլոր սեղանի շրջանակում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը հանդես է եկել «Միջազգային համագործակցության ոլորտում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ձեռքբերումները և ծրագրերը» թեմայով պլենար զեկույցով, որի ընթացքում ներկայացրել է առկա համագործակցության ընդլայնման ուղիներն ու հնարավորությունները, ՀՀ ԿԳՆ ԳԿ կողմից ներդրված

	գիտական փորձաքննության համակարգը: Վերոնշյալ այցի ընթացքում Սամվել Հարությունյանը Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի նախագահ Ս. Գապոնենկոյի հետ քննարկել է համագործակցությունը շարունակելու և գիտական և գիտատեխնիկական ծրագրերի նոր համատեղ մրցույթ հայտարարելու նպատակահարմարությունը: 2014թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացված մրցույթի շրջանակներում ֆինանսավորվել և հաջողությամբ իրականացվել են 17 գիտական երկամյա ծրագրեր, իսկ 2016թ. հայտարարված մրցույթի շրջանակներում այժմ իրականացվում են 19 գիտական երկամյա ծրագրեր: 2018թ. մայիսի 15-ին Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամը Գլոբալ հետազոտական խորհրդի (ГИС) կազմում ընդգրկված ազգային գիտական կազմակերպությունների ամենամյա հանդիպման շրջանակներում կազմակերպել էր ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև համագործակցության 10-ամյակին նվիրված հանդիպում: Հանդիպման ընթացքում ներկայացվել են համագործակցության արդյունքները, այսպես օրինակ՝ 10 տարվա ընթացքում անցկացված երեք մրցույթների արդյունքում իրականացվել են 81 գիտական ծրագրեր, տպագրվել են 500-ից ավելի գիտական հոդվածներ, իրականացվել են 60-ից ավելի փոխայցելության ծրագրեր: Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի տնօրեն Վ. Պանչենկոն, ընդգծելով համագործակցության արդյունավետությունը, առաջարկել է կազմակերպել երիտասարդ գիտնականներին աջակցություն տրամադրելու նպատակով գիտական ծրագրերի համատեղ մրցույթ:

	Մոսկվա այցի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այցելել է «Կուրչատովի ինստիտուտ» ռուսաստանյան ազգային կենտրոն: Կենտրոնի նախագահ Մ. Կովալչուկի հետ քննարկել է համագործակցային կապերի ընդլայնման հնարավորությունները:
Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:	«Հարևաններ հետազոտությունների ոլորտում» խորագրով Կլոր սեղանի քննարկումների արդյունքում Գլոբալ հետազոտական խորհրդի և ՀՀ ԿԳՆ ԳԿ միջև նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ գիտական փորձաքննություն իրականացնելու հնարավորությունները դիտարկելու վերաբերյալ. այն իր մեջ կներառի փորձագետների բազան համատեղ օգտագործելու հնարավորությունը, ինչպես նաև հնարավորություն կընձեռի փորձաքննության գործընթացում կիրառելու հարևան երկրների գիտական ներուժը: «Կուրչատովի ինստիտուտ» ռուսաստանյան ազգային կենտրոնի նախագահ Մ. Կովալչուկի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ ԿԳՆ ԳԿ - «Կուրչատովի ինստիտուտ»-Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ եռակողմ համագործակցության խթանման նպատակով քայլեր ձեռնարկելու մասին:
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի տնօրեն Վ. Պանչենկոն առաջարկել է երիտասարդ գիտնականներին աջակցություն տրամադրելու նպատակով 2018թ. աշնանը հայտարարել գիտական նախագծերի համատեղ մրցույթ: ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը նշել է, որ 2018թ. ՀՀ պետական բյուջեում վերոնշյալ նպատակով գումար նախատեսված չէ, ուստի կարող է քննարկվել մրցույթը 2019թ.-ին անցկացնելու հարցը:
Գործուղվող՝	Սամվել Հարությունյան
Ստորագրություն, ամսաթիվ	21.05.18թ.